# Հայտարարություն

**Հայտարարվում է մրցույթ ՀՀ Տավուշի մարզի «Բագրատաշենի Մ. Մագույանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ի զինղեկի, արվեստ (10 դասաժամ), ֆիզիկա (10 դասաժամ), աշխարհագրություն (10 դասաժամ), հայոց լեզու և գրականություն (30 դասաժամ), մաթեմատիկա (22դասաժամ), շախմատ (4դասաժամ), ֆիզկուլտուրա (6դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար**:

*Մրցույթն անցկացվելու է երկու փուլով ՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի : Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:*

*Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել ՝*

*. դիմում /ձև 1/*

*. 1 լուսանկար 3 x4 չափի*

*.բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթը /դիպլոմ/*

*.անձը հաստատող փաստաթուղթ*

*.<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան ՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/ :*

*.ինքնակենսագրություն/ձև 5/*

*. այլ պետությունների քաղաքացիները ՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*.ՀՀ արական սեռի քաղաքացիները ՝ զինվորական գրքույկ*

*. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր ՝ առկայության դեպքում*

*.որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝հավաստող փաստաթուղթ*

*Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում : Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:*

**Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. դեկտեմբերի 22-ից մինչև 2026 թ. հունվարի 8-ը ներառյալ , ամեն օր ժամը 9:00-ից -15:00-ը՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:**

**Մրցույթը տեղի կունենա 2026թ-ի հունվարի 9-ին ժամը**

**15:00 -ին**

*Բագրատաշենի Մ. Մազույանի անվան թիվ 1 միջնակարգ*

*դպրոցում ՝6 փողոց , շենք 15 հասցե*